ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք,
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, Հեռ. (322) 6-99-02 ,
margahovit.lori@mta.gov.am

N 80
14 ապրիլ 2017թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում եմ Մարգահովիտ համայնքի ղեկավարի թիվ, թիվ 28-Ա, 29-Ա, 30-Ա, 31-Ա, 32-Ա որոշումները:

Առդիր՝ 6 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Գասպարյան
Հեռ. /374/ 93-85-80-44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 28-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-070-0235-0027 ԾԱԾԿԱԳՐԻՑ 67.62142 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3 կետով

որոշում եմ՝

ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի վարչական տարածքում գտնվող, Մարգահովիտ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող, 06-070-0235-0027 կադաստրային ծածկագրից 67.62142 հա մակերեսով անտառային նշանակության հողը, անհատույց տրամադրել ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն "Հայանտառ" ՊՈԱԿ-ին՝ "Գուգարքի անտառտնտեսություն" մասնաճյուղի կողմից անտառտնկման աշխատանքներ իրականացնելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

20 __ թ. _____ ____
գ.Մարգահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (0322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2017 թվականի N 29-Ա

ՄԱՐՏԻ 8-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԻՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՆՎԵՐՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

Կանանց միջազգային փոնին նվիրված միջոցառման անցկացման ժամանակ համայնքի 140 կին աշխատողներին /համաձայն հավելվածի/ նվերներ տալու համար տրամադրել 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) դրամ ընդհանուր արժողության գումար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Ս. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 30-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 07022017-06-0021 վկայականը, Մել և Միլ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը, քաղաքացի Արտակ Մինասյանի դիմումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 18/05/2006թ. թիվ 912-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 11.05.2002թ. թիվ 498 որոշմամբ, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարգահովիտ համայնքում 06-070-0346-0103 ծածկագրի տակ գտնվող և սեփականության իրավունքով պատկանող 0.95131 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության /գործառնական նշանակությունը խոտհարք/ հողամասից տարանջատել 0.035հա հողամաս և գործող օրենսդրությանը համապատասխան նշված հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված՝ որպես արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամաս, գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտների գործառնական նշանակության հողամաս:
2. Օրինականացումը համապատասխանում է ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի «Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերի վրա (բնակելի, հասարակական) արտադրական նշանակության շենքերի և շինությունների կառուցումը սահմանափակելու մասին» թիվ 498 որոշմամբ սահմանված պայմաններին:
3. Հողամասի կադաստրային արժեքի նպատակային նշանակության փոփոխության տարբերությունը կազմում է 59600 /հիսունինը հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

4. Օրենքով սահմանված կարգով փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:
5. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասի վրա 1990 թվականին կառուցված 386.42քմ անասնագոմի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Արտակ Սուրենի Մինասյանի սեփականության իրավունքը:
6. Օրինականացված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
7. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները ընդհանուր 236060 /երկու հարյուր երեսունվեց հազար վաթսուն/ ՀՀ դրամ, 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
8. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ Մարգահովիտ համայնք, 4 փողոց 2 փակուղի 1 հասցեն:
9. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

20 __ թ. _____ ____
գ.Մարգահովիտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (0322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2017 թվականի N 31-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետերով.

ո ր ո շ ու մ ե մ՝

Մարգահովիտ համայնքի 2017թ-ի բյուջեի բաժին 01, խումբ 01, դաս 1, հոդված 411200-ով ,,Աշխատակիցների խրախուսում" ծրագրով նախատեսված գումարից թվով 7 (յոթ) համայնքի ղեկավարի աշխատակազմի կին աշխատակիցներին՝ կանանց միջազգային տոնի կապակցությամբ, հատկացնել խրախուսում ընդամենը 195.000 /մեկ հարյուր իննսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

1. Գասպարյան Սիրանուշ Է. – 30.000(երեսուն հազար) դրամ,
2. Կիրակոսյան Չնաշխարհիկ Ջ. – 30.000(երեսուն հազար) դրամ,
3. Բեկչյան Ալինա Լ. – 30.000(երեսուն հազար) դրամ,
4. Անտինյան Տաթևիկ Ա. – 30.000(երեսուն հազար) դրամ,
5. Սարուխանյան Սուսան Վ. – 30.000(երեսուն հազար) դրամ,
6. Բոջուկյան Օլյա Ս. – 30.000(երեսուն հազար) դրամ,
7. Ղազարյան Անահիտ Ռ. – 15.000(տասնհինգ հազար) դրամ,

Ընդամենը – 195.000(մեկ հարյուր իննսունհինգ հազար) դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Ս. ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (0322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2017 թվականի N 32-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին'' Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ կետով, 48-րդ հոդվածով, Մարգահովիտ համայնքի ավագանու 18.12.2015թ-ի ,,ՀՀ օրենսդրությամբ Մարգահովիտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին,, թիվ 48-Ա որոշմամբ, հիմք ընդունելով Մարգահովիտ համայնքի ներքոնշյալ բնակիչների դիմումները, աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը և ,,համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողներին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող,, հանձնաժողովի եզրակացությունը՝

ո ր ո շ ու մ ե մ՝

Բավարարել Մարգահովիտ համայնքի ներքոնշյալ բնակիչների դիմումները և աշխատակազմի քարտուղարի զեկուցագիրը.

Մարգահովիտ համայնքի 2017թ-ի բյուջեի բաժին 09, խումբ 04, դաս 1, հոդված 472900-ով ,,Կարիք. ընտանիքների բարձր. կրթ ստ,, ծրագրով նախատեսված գումարից թվով 1 (մեկ) ընտանիքի՝ Աննա Սուրենի Պոստոլակյանին /ՎՊՀ-ի մանկավարժության ֆակուլտետի ''Սոցիալական մանկավարժություն" մասնագիտության 3-րդ կուրս, առկա/ հատկացնել դրամական օգնություն, ընդամենը՝ 70.000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

1. Պոստոլակյան Աննա Սուրենի 70.000 դրամ:

Մարգահովիտ համայնքի 2017թ-ի բյուջեի բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 472900-ով նախատեսված գումարից թվով 4 (չորս) անապահով ընտանիքի հատկացնել դրամական օգնություն, ընդամենը՝ 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

1. Ալինա Ա. Անտինյան 50000 դրամ
2. Սամսոն Ս. Դերձյան 50000 դրամ
3. Սիսակ Խ. Խաչատյան 50000 դրամ
4. Անահիտ Ս. Ավետյան 50000 դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Ս. ԱՆԱՆՅԱՆ